Եւ ոմանք ասեն՝ ԺԵ. քանզի՝ Բուռն ընդ մեռանելն ամին գ.Օ. ամն եւս, որ ընդ Գրատիանոսի կառավարեաց: Սա զամենայն տաճարս կռոց կործանեաց, եւ զամենայն եկեղեցիս ազատեաց ՚ի հերձուածողաց: Սա ամենայն ազգաց սիրելի եւ հաճոյ լինէր. որ եւ բազում բարբարոսք՝ քրիստոնեայք եղեն վասն նորա: Սա եղեալ ՚ի պատերազմ ընդ բարբարոսան, եւ յաղթեաց նոցա ոչ զօրօք, այլ աղօթիւք եւ պահօք՝ ժանեաց զնոսա իսպառ: Էր սա արդարադատ եւ իրաւացոյց ՚ի պէտս հասարակաց: Եւ ունէր սովորութիւն, զի յամենայն օր որքան ծունր կրկնէին ամին մարդիկ, զայն ՚ի համարի պահէր, եւ յերեկոյին ե՛րբ առանձնանայր, զայնքան ծունր՝ ինքն՝ Աստուծոյ մատուցանէր եւ ասէր արտասուօք, Տէ՛ր՝ քեզ պարտ է անմահին երկրպագութիւն մատուցանել, եւ ոչ ինձ մահկանացուիս: Սա եմուտ ՚ի սուրբ Յարութիւնն. եւ ՚ի մտանելն՝ ամենայն շիջեալ կանթեղքն վառեցան: Եւ խաղաղու-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան